<< ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ>>
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ
2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ ՄԱՅՐԵՆԻԻ ԴԱՍԻՆ

ԱՌԱՐԿԱ՝ ԴԱՍՎԱՐ

ՀԵՂԻՆԱԿ՝ ՄԱՐԻՆԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՄԱՐԶ՝ ԱՐԱԳԱԾՈՏՆ

ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱՐԱՅԻ ԳՅՈՒՂԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ----------3

Գլուխ 1

ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐ----------4

Գլուխ 2

ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ ՄԱՅՐԵՆԻԻ ԴԱՍԻՆ----------7

Գլուխ 3

ՄԱՅՐՆԻԻ ԻՆՏԵԳՐՎԱԾ ԴԱՍ: ԲԱՅԻ ՈՒՍՈՒՑՈՒՄ----------10

ԴԵՄՔ, ԹԻՎ, ԺԱՄԱՆԱԿ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ----------21

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ----------22

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այսօր հանրակրթական դպրոցի կարևորագույն խնդիրներից մեկն այն է, որ ուսուցումը պետք է լինի աշակերտակենտրոն: Ուսուցիչը տարբեր մեթոդներ կիրառելով, պիտի բարձրացնի աշակերտի գործունեությունը դասերին: Պետք է ձևավորի աշակերտի մոտ ստեղծագործական մտածողություն,տրամաբանական մտածողություն, քննադատական մտածողություն, օգտագործելով միջառարկայական կապերը:

Միջառարկայական կապերի մասին Յ.Ա.Կոմենսկին իր <<Մեծ դիդակտիկա>> աշխատությունում նշում է, որ ուսումնական առարկաների փոխկապակցված ուսուցումը երեխաներին սովորեցնում է բացահայտել ուսումնասիրվող առարկաների և երևույթների միջև եղած կապերը.

<<Ամեն ինչ ամրապնդել բանականության հիմունքներով նշանակում է ամեն ինչ սովորել՝ մատնացույց անելով պատճառները, այսինքն՝ ոչ միայն ցույց տալ, թե ինչպես է այս կամ այն բանը տեղի ունենում, այլ նաև ցույց տալ, թե ինչու դա այլ կերպ լինել չի կարող: Չէ՞ որ իմանալ որևէ բան նշանակում է իրը ճանաչել իր փոխկապակցվածության մեջ>>:

Մեր գործն է՝սովորել ու սովորել, ձգտել կուտակել հնարավորին չափ շատ գիտելիքներ, որովհետև հասարակական լուրջ հոսանքներն այնտեղ են , որտեղ գիտելիքներն են, և ապագա մարդկության երջանկությունը միայն գիտելիքներում է:

Ա.Պ.Չեխով

Հարկավոր են խելացի, կրթված մարդիկ: Լավագույն կյանքին մարդկության մոտենալուն համեմատ այդ մարդկանց թիվը կմեծանա, մինչև որ նրանք կազմեն մեծամասնություն:

Ա.Պ.Չեխով

ԳԼՈՒԽ 1

ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐ

Հանրակրթական դպրոցի պահանջներին համապատասխան այսօր մեծանում է առարկաների միջև կապերի բացահայտում, դրանց դերն ու նշանակությունը: Ճիշտ և խելացի կազմակերպելու դեպքում կհարստանա սովորողների գիտելիքները: Այս ամենին կարող են օգնել միջառարկայական և ներառարկայական կապերը: Միջառարկայական և ներառարկայական կապ ստեղծելու շնորհիվ, ուսուցիչը երեխաների մոտ զարգացնում է ճանաչողական ակտիվությունը, սովորում են կատարել քննարկումներ, բերել փաստարկներ:

Աշակերտը կատարում է վերլուծություն, բացահայտում է պատճառահետևանքային կապերը, զարգացնելով տրամաբանական մտածողությունը, քննադատական մտածողությունը:

Միջառարկայական կապերը խթանում են սովորողների՝ հետազոտելու, հայտնագործելու, ստեղծագործելու կարողությունների ձևավորմանը: Հանրակրթական դպոցում աշխատող յուրաքանչյուր ուսուցիչ պարտավոր է գերազանց տիրապետել իր մասնագիտությունը, և ունենալ որոշակի ինֆորմացիոն պաշարներ նաև հարակից առարկաներից:

Ուսուցչի մասնագիտական պատրաստվածության և ուսուցման մեթոդների իմացությամբ, դրանց ճիշտ կիրառելու հմտությամբ է պայմանավորված աշակերտի ոչ միայն կրթվածության ցուցանիշը, այլ նաև նրա արժեհամակարգի ձևավորումը և մարդկային դրական որակների ձեռքբերումը:

Ուսուցման մեթոդները, տեսակները հնարավորություն են տալիս ապահովվելու ուսուցչի առջև դրված խնդիրները: Ուսուցիչը պետք է տեղեկացված լինի ուսուցման ժամանակակից մեթոդներին և ճիշտ կարողանա կիրառել դրանք:

Միջառարկայական կապերը դասկարգելիս ոմանք (Մ.Ն.Սկատկին, Ն.Մ.Վերզալին, Պ.Գ. Կուլագին և ուրիշներ) հիմք են ընդունում ժամանակային գործոնը:

Ըստ ժամանակային գործոնի՝լայն տարածում ունի միջառարկայական կապերի հետևյալ դասակարգումը՝

1.ուղեկցվող կամ հորիզոնական կապեր.պայմանավորված են երկու առարկաների համաժամանակյա տեղեկատվական նյութերով,

2.նախորդող կամ ուղղահայաց կապեր, գործադրվում են ուսումնական տարվա համեմատաբար կարճ, բայց հաջորդական ժամանակաշրջաններում, այսինքն երկու առարկաների տեղեկատվական նյութեր ուսումնասիրելիս,

3.հեռանկարային կապեր.պայմանավորված են մի քանի առարկաների այնպիսի տեղեկատվական նյութով, որ գործում է առավել երկար ժամանակ՝ 1-3 տարի:

Միջառարկայական կապերի օգտագործումը տալիս է հնարավորություն առարկայի, անձի և իրադրության մասին ձեռք բերված գիտելիքներն ու տեղեկությունները միավորել մեկ ընդհանուր համակարգի մեջ:Օգնում է բացատրվող նյութի խոր ու ճիշտ յուրացմանը, անցած գիտելիքների միջև տրամաբանական կապերի ստեղծմանը, գիտելիքների և կարողությունների օգտագործմանը, որը հսկայական զարգացնող արժեք ունի սովորողների համար:Միջառարկայական կապերը համարվում են ուսումնական գործընթացի դիդակտիկական պայման և միջոց, նպատակ և խնդիրներ, պարունակում են մեթոդներ, գիտության խորը և բազմակողմանի ուսումնասիրման, գիտելքների խորացման, տրամաբանական մտածողության զարգացման համար:

Ուսումնական գործընթացում միջառարկայական կապերի իրականացումը կարող է ապահովվել հետևյալ միջոցներով.

1.հարցերի շարադրում,

2.առանձին առաջադրանքների հանձնարարում,

3.ճանաչողական առաջադրանքների կատարում և այլն:

Դասի ուսումնասիրության ժամանակ միջառարկայական կապերը կարող են օգտագործել երեք տարբեր պահերին՝ նայած անհրաժեշտության:

1.Նոր նյութի ուսումնասիրման ժամանակ անցկացվող նախապատրաստական զրույցի ընթացքում ուսուցիչը կարող է օգտագործել այլ առարկաների տվյալները նյութի վերաբերյալ, ավելի պարզ պատկերացում տալու համար:

2.Նյութի մշակման ժամանակ, երբ աշակերտի ընթերցած հատվածի շուրջ որոշակի բացատրություններ են տրվում ուսուցչի և աշակերտների կողմից, կարելի է համեմատություններ և զուգահեռներ անցկացնել, միտքն ավելի պարզ դարձնելու համար:

Ամփոփման ժամանակ կարելի է դիմել միջառարկայական կապերի օգտագործմանը՝ հեռավոր էքսկուրսիաներ, որոնք թույլ են տալիս ազատ դատողություններ անել:

Գլուխ 2

Միջառարկայական կապը մայրենիի դասին

Մանկավարժության մեջ միջառարկայական կապերի հիմնահարցերին անդրադարձել են (Յ.Ա.Կոմենսկին, Ֆ.Հերբարտը, Խ.Աբովյան և ուրիշներ) միջառարկայական կապերի իրականացումը համարելով ուսուցման բարելավման կարևոր միջոց:Ուսուցումն առավել հետաքրքիր է դառնում , երբ մի առարկան համագործակցում է մյուսի հետ:

Տարրական դասարաններում դրվում են կարողությունների և գիտելիքների բոլոր հիմքերը:Սովորողները հաղորդակից են դառնում մարդկության կողմից ստեղծված մշակութային ժառանգությանը, ծանոթանում են բնության գաղտնիքներին, զարգանում է նրանց խոսքն ու մտածողությունը: Պետք է սովորողներին օգնել շրջապատի, աշխարհում տեսնել և տարբերակել լավն ու վատը, գեղեցիկն ու տգեղը, չարն ու բարին:

Տարրական դասարանների բոլոր դասագրքերի կարևոր ու առանձնահատուկ բաղադրիչներից մեկն դա նկարն է:

Դասագրքերում օգտագործվող նկարները թեմատիկ են և լինում են երեք տեսակ՝ նկար-բառեր, նկար-նախադասություններ և նկար-պատմություններ:Նկարների հիմնական նպատակը երեխաների մեջ նպաստում է խոսքի զարգացման, երևակայության, գեղարվեստական ճաշակի զարգացմանը:Թեմատիկ նկարներում հուշում են ուսումնասիրվող թեման, իսկ ուսուցչին հնարավորություն են տալիս պարզելու երեխայի գիտելիքները, մտքերը այդ թեմայի շուրջ:

Տարրական դասարանների մայրենի լեզվի դասերը լայն հնարավորություններ են ստեղծում, քանի որ մայրենի դասագրքում կան թեմատիկ դասեր: Յուրաքանչյուր թեմայում ուսումնասիրվում և դաստիարակվում է առանձին գաղափարներ:

Հայրենիք թեմայի շուրջ տարվող աշխատանքների արդյունքում երեխային տրվում է հայրենասիրական դաստիարակություն, ճանաչում են հայ մշակույթը, հայ մեծ

գործիչներին,ստեղծվում է բազմաթիվ միջառարկայական կապեր,որոնց միջոցով խորացվում է երեխայի գիտելիքը և դարձնում իր սեփականը։ օրինակ՝

1աշխարհագրություն-պատմություն

Ծանոթանում է Հ.Հ. քարտեզին,մարզերին և այլն։

2Երգ-երաժշտություն

Կատարում են Հ.Հ .օրհներգը։

3Ծանոթանում են հեղինակներին, դիտում են նկարները։

4Ստանում են որոշակի կենսագրական տվյալներ։

5Կերպարվեստ-տեխնոլոգիա, ծանոթանում են գույներին, դրանց նշանակությանը, դրոշը նկարում և պատրաստում են։

6Ցուցադրվում է զինանշանը և խոսվում է հեղինակների մասին։

7Ծանոթացնել նաև հարևան երկրներին։

Մյուս բոլոր թեմատիկ դասերի ընթացքում ստեղծվում է նման միջառարկայական կապեր։

Հեքիաթների և առակների բաժնում սովորեցնում ենք ճանաչել լավը, բարին, գեղեցիկը, մարդու աշխատանքը։Գնահատել և արժևորել վատը, չարը, նենգությունը, ժլատությունը, դատապարտել և հասկանալ դրանց կործանարար ուժը։

Կերպարվեստի և տեխնոլոգիայի դասաժամերին ուսուցումը պետք է կազմակերպել այնպես, որ զարգանա սովորողի մտածողությունը, տարրածական պատկերացումները, զարգացնում ենք մանր մոտորիկան։

Միջառարկայական կապ կարող է ստեղծվել մաթեմատիկա, կերպարվեստ, տեխնոլոգիա առարկաների հետ։

Օրինակ 1Մայրենիի թեման է-Սովորեցնել ձևը, գույնը և չափը։

Կապը մաթեմատիկայի հետ-Տրվում է երեխաներին որոշ երկրաչափական պատկերներ՝ շրջան, եռանկյուն, քառակուսի, յուրաքանչյուրից՝ մեծ, միջին և փոքր, ինչպես նաև յուրաքանչյուր ձևից երեք գույնի՝ կարմիր, կապույտ, դեղին։

Տալ խմբավորման տարբեր առաջադրանքներ։ Խմբավորել նույն ձևի, չափի, գույնի պատկերները և ներկայացնել։ Խմբավորել մրգերը, բանջարեղենները,վայրի և ընտանի կենդանիները և այլն։

Օրինակ 2Մայրենի-տառուսուցում առաջին դասարանում

Կապը մաթեմատիկայի հետ

1Գրատախտակին գրել աշուն բառը և հաշվել տառերի քանակը (4)

2Հեռացրու ա-ն և ստացիր նոր բառ

3.Հաշվիր տառերի քանակը (3)

4. Համեմատիր 4 և 3 թվերը

5Շուն բառը կարդա հակառակ (նուշ)

6Ասա 4-ի հաջորդ և նախորդ թվերը

73-ից փոքր թվեր, 4-ից մեծ թվեր և այլն։

Կապ ստեղծել տեխնոլոգիայի հետ։ Բաժանել երկու խմբի, մի խմբին հանձնարարել ծեփից պատրաստել ձայնավոր հնչյունները, մյուս խմբին՝ բաղաձայն հնչյունները։

Կապ ստեղծել նաև կերպարվեստի հետ և թվերի օգնությամբ նկարել շուն։

Մայրենիի տարրական ուսուցման գործընթացում մյուս առարկաների հասկացությունների օգտագործումը պետք է նպաստի այդ դասարաններում սովորողների իմացական գործունեության բարձրացմանը և արդյունքում նրանք կստանան խորը գիտելիքներ տվյալ առարկայից։

Գլուխ 3

Մայրենիի ինտեգրված դաս: Բայի ուսուցում

Տարրական դասարաններում սովորողներին տալիս ենք լեզվական նախագիտելիք-ներ (առարկա, գործողություն, հատկանիշ ցույց տվող բառեր) առաջին և երկրորդ դասարաններում:

Երրորդ-չորրորդ դասարաններում լեզվական նախագիտելիքների հիման վրա գիտելիք ենք հաղորդում խոսքի մասերի վերաբերյալ: Երրորդ-չորրորդ դասարան-ներում ուսումասիրում ենք՝ գոյական, բայ, ածական, թվական, դերանուն, շաղկապ, ձայնարկություն խոսքի մասերը:

Բայի ուսուցումը տարրական դպրոցում լուրջ բարդություն է ներկայացնում, որովհետև այն ունի քերականական շատ հատկանիշներ:Այդ իսկ պատճառով այն ուսումնասիրվում է մի քանի փուլով: Դեռևս գրաճանաչության շրջանում երեխաները ծանոթանում են բայի հետ, առանց նրա քերականական անվանումը անվանելու: Աշակերտներն այդ խոսքի մասին ծանոթանում են ավելի վաղ, քան նրա քերականական հասկացությանը, որովհետև առանց գործողություն ցույց տվող բառերի օգտագործման նրանք խոսք կառուցել չեն կարող՝մարդու խոսքում գործողություն ցույց տվող բառերը մեծ բաժին են կազմում:

Բայի ուսուցման գործընթացի փուլերի հաջորդականությունը պայմանավորված է տարրական դպրոցում այդ խոսքի մասի ուսումնասիրման նպատակներով, դրա անհրաժեշտությամբ, լեզվաբանական առանձնահատկություններով և դպրոցականների մտավոր կարողությունների մակարդակով:

Ուսուցման առաջին փուլում՝

. ձևավորվում է նախնական պատկերացում բայ խոսքի մասի վերաբերյալ՝ իբրև առարկայի գործողություն ցույց տվող բառ

. մշակվում է հարցերի միջոցով գործողություն ցույց տվող բառերի իմաստային արժեքը դիտարկելու ունակություն,

. զարգանում է գրավոր և բանավոր խոսքում բայերը ճիշտ և գիտակցված կիրառելու աշակերտների կարողությունը,

Մշակվում է օժանդակ բայերը և առհասարակ բայերը ճիշտ արտասանելու և գրելու ունակություն:

Նկատի ունենալով, որ բայի լեզվաբանական առանձնահատկությունների յուրացումը կրտսեր դպրոցականների համար բարդ է, տարրական դասարաններում սովորողները ծանոթանում են բայի միայն մի քանի հատկանիշներին:

Բայերի ուսուցման նախապատրաստական շրջանը (առանց անուն օգտագործելու) պայմանականորեն համընկնում է գրաճանաչության շրջանի հետ: Այս շրջանում կրտսեր դպրոցականներին գործողություն ցույց տվող բառերի մասին գաղափար տալու համար օգտագործում ենք հետևյալ գործնական վարժությունները:

Ի՞նչ է անում տղան:

Ի՞նչ է անում աղջիկը:

Ի՞նչ կարող են անել այս առարկաները:

Ի՞նչ կարելի է անել այս առարկաներով:

Երեխաները պատասխանում են նկարների բովանդակությանը համապատասխան ուսուցչի տված հարցերին՝ կազմելով տարաբնույթ նախադասություններ:

Կարևոր հանգամանք

Նախադասություններ կազմելու ժամանակ մտքով համապատասխանող բառն ընտրելիս աշակերտները պետք է կապ ստեղծեն բառի արտահայտած իմաստի և այն հարցի միջև, որին պատասխանում է այդ բառը:

Օրինակ՝ Թռչուններն աշնանը (ի՞նչ են անում) չվում են:

Երեխան գնդակով (ի՞նչ է անում) խաղում է:

Նկարիչը վրձնով (ի՞նչ է անում) նկարում է:

Ուսուցման այս փուլում նպատակահարմար է աշխտանքն սկսել այն բայերից, որոնց բառային նշանակությունը համընկնում է քերականական իմաստին: Այդ նպատակով աշակերտներին դարձյալ պետք է առաջարկել տարբեր առաջադրանքներով վարժություններ:

Ամբողջացրու նախադասությունները տրված հարցերի օգնությամբ և գրիր:

Արևը (ի՞նչ է անում) ...

Թռչունները (ի՞նչ արեցին) ...

Ձյունը (ի՞նչ է արել) ...

Առվակը (ի՞նչ է անում) ...

Տերևները (ի՞նչ արեցին) ...

Երեխան (ի՞նչ է անում) ...

Տրված հարցի օգնությամբ կազմիր նախադասություններ և գրիր:



Ուսուցման այս փուլում զարգանում է սովորողների՝ բառին համապատասխան հարց առաջադրելու կարողությունը: Ուսուցիչը, օգտագործելով տարբեր ժամանակային ձևեր և կազմություն ունեցող բայեր, մարզում է երեխաների հարցադրման կարողությունը: Ի՞նչ

հարցին պատասխանող բառերը համապատասխանեցվում են ի՞նչ հարցին պատասխանող բառերին: Ընդ որում՝ նշվում է, որ առաջին խմբի բառերն առարկաների անուններ են (գոյական անուններ), իսկ երկրորդ խմբի բառերը՝ առարկաների կատարած գործողությունների անվանումներ (բայեր): Այսպիսի համադրումը ոչ միայն նպաստում է բայերի և գոյական անունների տարբերակմանը, այլև խոսքում նրանց փոխգործողության հաստատմանը: Այս նպատակով կարելի է սովորողներին առաջարկել անավարտ նախադասություններ և անձնարարել դրանք ամբողջացնել հարցերի օգնությամբ:

Ամբողջացրու նախադասությունները գործողություն ցույց տվող բառերով և գրիր:

ա) Արևը □□□□□□□□□□□□□□□□□□:

բ) Գայլերը □□□□□□□□□□□□□□□անտառում:

գ) Երեխան □□□□□□□□□□□□□□:

դ) Ուսուցչուհին □□□□□□□□□□□դասը:

ե) Պայծառ արևը □□□□□□□□□□□□հողը:

զ) Երեխաները …… ….այգի:

է) Ինքնաթիռը □□□□□□□□□□□□□երկնքում:

<u>Կարևոր հանգամանք</u>

Բայի ուսուցման տարրական փուլում պետք է բավարարվել միայն նրանով, որ աշակերտները խոսքում ճիշտ օգտագործեն գործողություն ցույց տվող բառերը, հարցերի միջոցով կարողանան կապեր ստեղծել առարկայի գործողություն ցույց տվող բառի և այդ առարկան ցույց տվող բառերի միջև և որոշեն, թե որ բառն է առարկա ցույց տալիս, որը նրա կատարած գործողությունը:

Գործողություն ցույց տվող բառերն քերականական անվանում տալու և բայի մասին մի քանի կարևոր գիտելիքներ հաղորդելու համար պետք է իմանալ, որ բայը ցույց է տալիս գործընթաց, այսինքն՝ առարկայի հատկանիշը ներկայացնում է որպես գործողություն,

վիճակ կամ ձևավորում: Բայն իր իմաստային կողմով ընդգրկում է առարկայի շարժման փոփոխական հատկանիշի ամենատարբեր արտահայտությունները.

ա) շարժում տարածության մեջ՝ քայլել, թռչել, հեռանալ, մոտենալ, սավառնել, գնալ գալ և այլն,

բ) մտավոր և հոգեկան գործողություններ՝դատել, երգել, խոսել, խռովել, հաշտվել, մտածել, հուզվել և այլն,

գ) գործողություններ տարբեր առարկաների նկատմամբ՝կոտրել, ջարդել, սղոցել, մաղել, խմել, վերանորոգել, հանդիպել,դիմադրել և այլն,

դ) հասարակական կյանքին վերաբերող գործողություններ՝ ազատագրել, ապստամբել, շահագործել, պատերազմել և այլն,

ե) առարկայի վիճակը իբրև գործընթաց՝ծաղկել, քարանալ, փտել, կանաչել, մրսել, ցավել և այլն:

Բացի իմաստաբանական բազմազանությունից, բայն իրենից ներկայացնում է տարաբնույթ քերականական կարգերի և ձևերի համադրում:Այն փոփոխվում է ժամանակով, թվով, դեմքով, եղանակով:

Նախադասությունների շարահյուսական վերլուծության ճանապարհով երեխաները գալիս են այն եզրակացության, որ բայը նախադասության մեջ հիմնականում կատարում է գլխավոր անդամի ստորոգյալի պաշտոն:

Բայը մեծ դեր ունի սովորողների գրավոր և բանավոր խոսքի ձևավորման գործում, և շատ կարևոր է նրա ճիշտ գործածությունը խոսքում: Այդ պատճառով էլ անհրաժեշտ է հետևողական աշխատանք տանել օժանդակ բայերի և ընդհանրապես, բայերի ճիշտ գրության և արտասանության կարողությունների ձևավորման ուղղությամբ:

Բայի՝ որպես խոսքի մասի վերաբերյալ հասկացության ձևավորումը բայերի փոփոխությունը թվով և ժամանակով, սովորողների կողմից բայերի ժամակային ձևերի կազմման կարողության գործնական տիրապետումը և խոսքում առավել գործածական բայերի ճիշտ կիրառումը կատարվում են հաջորդ փուլում: Այս փուլում

էլ պարզապես պետք է խորացնել սովորողների գիտելիքները բայի՝ որպես խոսքի մասի վերաբերյալ, զարգացնել խոսքում բայերը ճիշտ գործածելու կարողությունը, ծանոթացնել բայերի խոնարհման հետ, սովորեցնել որոշել բայի դեմքը ներկա, անցյալ և ապառնի ժամանակաձևերում:

<u>Բայի դեմք:</u> Բայ խոսքի մասի հատկանիշներից աշակերտներն առաջինն իմանում են նրա դեմքի մասին, առանց որի հնարավոր չէ թվի և ժամանակի կարգերի ուսուցումը: Այս աշխատանքի մեթոդիկան հրաշալի է ներկայացնում պրոֆեսոր Ա Տեր-Գրիգորյանը, որն առաջարկում է գրատախտակին գրել որևէ բայի խոնարհման ձևի լրիվ աղյուսակը և դրա վրա բացատրել բայի դեմքը:Որպեսզի երեխաներն ավելի լավ հասկանան, կարելի է որպես բայի դեմքի և թվի տարբերակման գործընթացը պարզեցնող միջոց՝ վերցնել անձնական դերանունները: << Չնայած աշակերտները դեռևս գազափար չունեն անձնական դերանունների մասին, սակայն դա չի խանգարում այդ բառաձևերը ճիշտ հասկանալուն, որովհետև առօրյա խոսքից դրանք երեխաներին շատ ծանոթ ու գործածական բառեր են>>:

Խաղում եմ	ես խաղում եմ
Խազում ես	դու խաղում ես
Խաղում է	նա խաղում է

Բառաշարքերի բառերի համեմատության միջոցով աշակերտները տեսնում են, որ ճիշտ է՝բոլոր ձևերի մեջ խոսքը միևնույն գործողության մասին է, սակայն այդ գործողությունը կատարողը նույն անձնավորությունը չէ առաջին ձևը ցույց է տալիս, որ գործողություն կատարողը խոսողն ինքն է (ես), երկրորդ ձևի մեջ՝ խոսողի խոսակիցը (դու), իսկ երրորդ ձևի մեջ՝ խոսողի և խոսակցի հետ կապ չունեցող մի երրորդ անձնավորություն (նա); Այսինքն՝ խաղալու միևնույն գործողությունը կատարում են երեք տարբեր դեմքեր: Երեխաները եզրակացնում են

. բայն ունի երեք դեմք՝ առաջին, երկրորդ և երրորդ,

.խոսողն առաջին դեմքով արտահայտում է իր կատարած գործողությունը (խաղում եմ, խաղացի, խաղալու եմ), երկրորդ դեմքով՝ իր խոսակցի գործողությունը (խաղում ես, խաղացիր, խաղալու ես), երրորդ դեմքով՝ ոչ իր և ոչ էլ իր խոսակցի, այլ մի երրորդ մարդու կամ առարկայի կատարած գործողությունը (խաղում է, խաղաց, խաղալու է),

. բայը փոփոխում է ըստ այդ դեմքերի, բայի փոփոխված ձևերը կոչվում են դիմավոր (դեմք ունեցող, դեմք ցույց տվող) ձևեր։

Բայի դիմավոր ձևերի մասին գիտելիքների ձեռքբերումը պիտի սկսել բայի հիմնական և օժանդակ մասերից՝ օրինակ՝ ցույց տալ, որ խաղում եմ բայի մեջ խաղումը հիմնական մասն է, իսկ եմ-ը՝ օժանդակ մասը, որը կոչվում է օժանդակ բայ։ Հենց այդ օժանդակ բայի միջոցով էլ հնարավոր է որոշել, թե որ դեմքով է դրված բայը։ Օժանդակ բայերը լինում են երկու տեսակ՝ եմ, ես, է, ենք, եք, են և էի, էիր, էր, էինք, էիք, էին։

I դեմք- եմ, ենք	էի, էինք
II դեմք- ես, եք	էիր, էիք
III դեմք- է, են	էր, էին

<u>Կարևոր հանգամանք</u>

Բայի ուսուցման գործընթացում պիտի կարևորել օժանդակ բայերի անջատ գրությունը, ուղղագրությունը և ուղղախոսությունը։ Հետագայում բայի թվի մասին գաղափար տալիս, վարժությունների կատարման ճանապարհով աշակերտները կգան այն եզրակացության, որ օժանդակ բայերը ոչ միայն բայի դեմքի, այլև թվի կրողներ են՝ արտահայտում են բայի թիվը։ Իսկ հետո նրանք կիմանան նաև, որ օժանդակ բայերը բայի ժամանակի կրողներ են։

Կրտսեր դպրոցականները դժվարությամբ են յուրացնում բայի դեմք հասկացությունը։ Ուստի անհրաժեշտ է առավել հաճախակի կատարել տարբեր վարժություններ։

Վարժություն 1

Առանձին սյունակներով խմբավորիր առաջին,երկրորդ և երրորդ դեմքի բայերը և գրիր։

Գրում եմ, մտածում է, նկարում ենք, նստել ես, գնացի, փայլում է, ծաղկեցին, գտել է, արթնացել են, գրում ես։

Վարժություն 2

Տրված անդեմ բայերը դարձրու դիմավոր։

Գրել, խաղալ, մտածել, վախենալ, հոգնել, թռչել, նվագել, նկարել, վազել, սիրել

<u>Բայի թիվ:</u> Բայի թվի մասին գաղափար ձևավորելիս պետք է կարևորել նրա իմաստային կողմը և թվի արտահայտման ձևաքերականական հնարը։ Այդ ուղղությամբ կատարվող վարժությունների հիման վրա աշակերտները եզրակացնում են, որ եզակի թվով դրված բայը ցույց է տալիս մեկ առարկայի կատարած գործողությունը, իսկ հոգնակի թվով դրվածը՝ երկու կամ ավելի առարկաների կատարած գործողությունը։ Ուսումնասիրելով մի քանի բայերի փոփոխումը թվով՝ սովորողները համոզվում են, որ թվի կրողը օժանդակ բայն է։ Այս երևույթը դյուրընկալ դարձնելու համար կարելի է կրկին դիմել անձնական դերանուններիօգնությանը։

Եզակի թիվ	**Հոգնակի**
I դեմք- ես գրում եմ	մենք գրում ենք
II դեմք- դու գրում ես	դուք գրում եք
III դեմք- նա գրում է	նրանք գրում են

Ուսուցիչն աշակերտներին ցուցադրում է նկարներ՝ որոնցից մեկի վրա պատկերված է մեկ առարկա, իսկ մյուսի վրա՝մի քանի առարկաներ՝հանձնարարում է աշակերտներին կազմել ընդամենը երկու բառից կազմված նախադասություն։ Հանձնարարվում է նաև համեմատել այդ նախադասությունների բայերը և որոշել, թե քանի առարկայի կատարած գործողություն է ցույց տալիս դրանցից յուրաանչյուրը։ Աշակերտները ուսուցչի օգնությամբ կատարում են ընդհանրացումներ

1. եթե բայը ցույց է տալիս մեկ առարկայի կատարած գործողություն, ապա այն դրված է եզակի թվով,

2. եթե բայը ցույց է տալիս երկու կամ ավելի առարկաների կատարած գործողություն, ապա այն դրված է հոգնակի թվով,

3. գոյական անվան հետ կապված բայը դրվում է միևնույն թվով, ինչ որ գոյական անունը,

4.Փոխելով գոյականի թիվը՝ փոխում են նաև բայը:

Բայի ժամանակ: Դեմքի և թվի մասին գաղափար տալուց հետո սովորողներին բացատրվում է բայի քերականական մեկ այլ հատկանիշի մասին, բայի ժամանակի մասին:

Բայի ժամանակային ձևերի ուսումնասիրումը տարրական դասարանների համար զգալիորեն դժվար է: Սովորողներն այդ ձևերի էությունը բացահայտում են՝ խոսելու պահի համեմատությամբ գործողության կատարման ժամանակը որոշելով: Օրինակ՝ուսուցիչը գրատախտակի մոտ է հրավիրում մի աշակերտի և նրան հանձնարարում է գրատախտակին գրել: Աշակերտները հետևում են գրատախտակի մոտ գտնվող երեխային. ի՞նչ գործողություններ է նա կատարում կամ արդեն կատարել, ինչպես նաև քննարկում՝ ի՞նչ պետք է անի նա (գրում է նախադասությունը, գրել է նախադասությունը, պետ է գրի նախադասությունը): Համանմանորեն կազմվում են նախադասություններ այն մասին, ինչ կատարվում է ներկա պահին, այսինքն՝ խոսելու պահին, ինչ է եղել խոսելու պահից առաջ, և ինչ է տեղի ունենալու խոսելու պահից հետո:

Մեր Լիլիթը սովորում է երրորդ դասարանում:

Ձկնորսը ձուկ է որսում:

Գարնանը կրկին կծաղկեն ծառերը:

Միջոցառումը տեղի է ունենալու դահլիճում:

Բայն ունի երեք ժամանակ՝ներկա, անցյալ, ապառնի:

Բայի ներկա ժամանակը ցույց է տալիս այնպիսի գործողություն, որը կատարվում է խոսելու պահին: Ներկա ժամանակով դրված բայերը պատասխանում են ի՞նչ է անում, ի՞նչ են անում հարցերին:

Բայի անցյալ ժամանակը ցույց է տալիս այնպիսի գործողություն, որը կատարվել է խոսելու պահից առաջ։ Անցյալ ժամանակով դրված բայերը պատասխանում են ի՞նչ է արել, ի՞նչ են արել հարցերին։

Բայի ապառնի ժամանակը ցույց է տալիս այնպիսի գործողություն, որը կատարվելու է խոսելու պահից հետո։ Ապառնի ժամանակով դրված բայերը պատասխանում են ի՞նչ է անելու, ի՞նչ են անելու հարցերին։

Տարրական դասարաններում բայի ժամանակը որոշելու հիմնական միջնորդը հարցն է, քանի որ նրանք չունեն խոր և բազմակողմանի գիտելիքներ բայի ժամանակային ձևերի կառուցվածքի մասին։ Այդ իսկ պատճառով կարևոր է աշակերտներին սովորեցնել ճիշտ հարցադրել բայը՝ նրա ժամանակային ձևը որոշելու համար։

Վարժություն 1

Փակագծերում գրիր բայերին առաջադրվող հարցերը և որոշիր ժամանակը։

ա) Երեխաները գնում են (…) դպրոց։

բ) Իջավ (…) խաղաղ երեկոն։

գ) Մաղում է (…) բարակ անձրև։

դ) Շուտով թռչունները կվերադառնան (…) տաք երկրներից։

Բայի ժամանակի քերականական կարգի իմաստն ավելի պարզ և հասկանալի է դառնում միևնույն բայի տարբեր ժամանակային ձևերի համեմատության ճանապարհով։ Օրինակ՝

1.Սկսվում է տերևաթափը։

Սկսվել է տերևաթափը։

Շուտով կսկսվի տերևաթափը։

2 Թռչունները երամներով չվում են հարավ։

Թռչունները երամներով չվել են հարավ։

Թռչունները երամներով չվելու են հարավ։

Եզրակացություն

Միջառարկայական կապերը օգնում են դիմակայել հանրակրթության մարտահրավերներին և բարձրացնել ուսումադաստիարակչական գործընթացի արդյունավետությունը: Միջառարկայական կապերի օգտագործումը հնարավորություն է տալիս միևնույն առարկայի կամ երևույթի մասին տարբեր առարկաներից ձեռք բերված գիտելիքներն ու տեղեկությունները միավորել մեկ ընդհանուր համակարգի մեջ: Այն օգնում է բացատրվող խորը և ճիշտ յուրացմանը, ձեռք բերած գիտելիքների, հմտությունների ու կարողությունների օգտագործմանը, որը հսկայական զարգացնող արժեք ունի երեխաների համար:

Բայի ուսուցման ժամանակ ստեղծելով միջառարկայական կապեր՝ մաթեմատիկա, ռուսաց լեզու առարկաներից:

Մենք հնարավորություն տվեցինք սովորողներին բայի ուսուցման մասին նախկինում իրենց ունեցած գիտելիքները համակարգել, ամրապնդել ու կիրառել, նպաստեցինք անցածի ու անցնելիքի միջև տրամաբանական կապերի ստեղծմանը, ստեղծագործական և քննադատական կարողությունների զարգացմանը:

Միջառարկայական կապերն օգնեցին աշակերտներին նյութն ավելի հեշտ ընկալել և ինքնուրույն ուսումնառության հմտություններ ձևավորել:

Մարդը ձգտում է դեպի գիտելիքները, և հենց որ նրանում մարում է գիտելիքների ծարավը նա դադարում է մարդ լինելուց:

Ֆ. Նանսեն

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՀՀ Կ.Գ.Ն. Կրթության ազգային ինստիտուտ

Հայոց լեզու և գրականություն 2005թ.Ա

2. Ա. Տեր-Գրիգորյան, Հայոց լեզվի դասավանդման մեթեդիկա
Եր..<<Լույս>> 1960, էջ 366

3.Գ.Ս. Աբրահամյան, ժամանակակից հայերենի քերականություն, Երևան, <<Լույս>> 1969, էջ 133

4. Ջուլիետա Գյուլամիրյան, Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա

5.Համացանց